ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ N 60 -Ա
« 13 » ՄԱՐՏԻ 2025Թ.

«ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՋԵԴԵԱՅԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՍԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՀԱՅԿ ՎԱՉԻԿԻ ՂԱՄԲԱՐՅԱՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 112-հոդվածի 2-րդ մասի 2.1 կետով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասով, 16-րդ հոդվածի 3-րդ մասի «ա» ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 16-ի «Հանրակրթական ուսումնական հաստատության և տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի մանկավարժական և վարչատնտեսական աշխատողների պաշտոնների անվանացանկը, դրանց նկարագիրը սահմանելու մասին» N 216-Ն որոշմամբ սահմանված թիվ 1 հավելվածի «1. Վարչատնտեսական մասի համակարգող՝ հանրակրթական ուսումնական հաստատության» մասի 25-րդ կետով, հիմք ընդունելով 2023 թվականի նոյեմբերի 9-ի N528 աշխատանքային պայմանագրի 6-րդ բաժնի 6.1 կետի «գ» ենթակետը և Հայկ Վաչիկի Ղամբարյանի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի ենթակայության «ՀՀ Վայոց ձորի մարզի Զեդեայի հիմնական դպրոց»» ՊՈԱԿ-ի վարչատնտեսական մասի համակարգող Հայկ Վաչիկի Ղամբարյանի լիազորությունները դադարեցնել՝ լուծել նրա հետ կնքած 2023 թվականի նոյեմբերի 9-ի N528 աշխատանքային պայմանագիրը: Աշխատանքի վերջին օրը համարել 2025 թվականի մարտի 13-ը:

2. «ՀՀ Վայոց ձորի մարզի Զեդեայի հիմնական դպրոց»» ՊՈԱԿ-ի վարչատնտեսական մասի համակարգող Հայկ Վաչիկի Ղամբարյանի

լիազորությունների կատարումը դնել «ՀՀ Վայոց ձորի մարզի Զեղեայի հիմնական դպրոց»» ՊՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Վարդուշ Գեղամի Ղազարյանի վրա:

3. «ՀՀ Վայոց ձորի մարզի Զեղեայի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում հանձնման-ընդունման աշխատանքները կազմակերպելու նպատակով ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:

4. Հանձնաժողովի աշխատանքներին մասնակից դարձնել հաստատության նյութական պատասխանատու անձանց:

5. Որոշումն ուժի մեջ է մտնում Հայկ Վաչիկի Ղամբարյանին ծանուցելու օրվան հաջորդ օրվանից:

Recoverable Signature

X

Signed by: KOLYA MIKAELYAN 3507670100

Կ. ՄԻՔԱԵԼՅԱՆ

ք. Եղեգնաձոր

Հավելված
ՀՀ Վայոց ձորի մարզպետի
2025թ մարտի 13 -ի
N 60 -Ա որոշման

«ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՋԵԴԵԱՅԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-ՈՒՄ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՍՏԵՂԾՎԱԾ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ

Հանձնաժողովի նախագահ՝

Վահան Աբրահամյան	ՀՀ Վայոց ձորի մարզպետի խորհրդական

Անդամներ՝

Հուսիկ Հարությունյան	ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության գլխավոր մասնագետ
Գվիտոն Դավթյան	ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետի պաշտոնում փորձագետ